



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 09 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2013

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՄՈՍ 92

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ինչ լաւ է գոհութիւն մատուցանել քեզի, Տէր,  
եւ ներբողել քու անունդ, ո՛վ Բարձրեալ:  
Ամէն առաւօտ քու սէրդ պատմել,  
եւ գիշերները հաւատարմութիւնդ հոչակել՝  
տասնալար նուագարանով ու տաւիղով,  
եւ քնարի նուագակցութեամբ:  
Գործերովդ զիս ուրախացուցիր, ո՛վ Տէր,  
ըրածներդ տեսնելով՝ ցնծութեամբ կ'երգեմ:  
Ինչքան մեծ են գործերդ, Տէր,  
ինչքան խորունկ են քու խորհուրդներդ:  
Արդարները պիտի ծաղկին արմաւենիի նման,  
պիտի աճին Լիբանանի մայրիներու պէս:  
Տիրոջ տան մէջ պիտի տնկուին,  
մեր Աստուծոյն տանարին մէջ պիտի բուսնին:  
Նոյնիսկ ծերանալէ ետք պտուղ պիտի տան,  
պիտի մնան կորովալից ու մշտաթարմ,  
որպէս վկայութիւն՝ թէ ուղիղ է Տէրը, իմ Վեմս,  
եւ անոր քով անարդարութիւն չկայ:

### ՆԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ԱՍՏՈՒԾՈՑ ՈՒԽՏԸ ԱԲՐԱՄԻՆ ՀԵՏ (15:1-21)

«Այս բաները պատահեցան՝ իբրև օրինակ մեզի» (Ա Կորնթ 10:6)

«Աստուծոյ ներշնչումով գրուած բոլոր Սուրբ գիրքերը օգտակար են՝ թէ՛ ճշմարտութիւնը ուսուցանելու եւ թէ՛ սխալը հերքելու, մարդս ճիշդ ճամբու մէջ դնելու եւ արդար կեանքի մը դաստիարակութիւնը փալու համար. որպէսզի Աստուծոյ նուիրուած մարդը կատարեալ ըլլայ, ամեն փեսակի բարի գործերու պատրաստ» (Բ Տիմ 3:16-17):

«Մի՛ վախնար, ով Աբրամ, ես քեզի վահան եմ ու քու վարձքդ խիստ շատ պիտի ըլլայ»:

Ինչ է չվախնալ, փեսիլքէն: Հարուցում չսպասար, չմտաւորուի՛լ: Ընդհակառակը, Աստուծոյ նախ ցոյց կու փայ մտերմութիւն մը, Աբրամին անունը կանչելով: Երկրորդ, անմիջապէս կը յիշեցնէ, որ Տէրը վահան պիտի ըլլայ իրեն, որ կը նշանակէ Աստուծոյ Ինք է մեր փոխարէնը պատերազմողը, մարտնչողը: Միւս կողմէ, Աբրամին մտերմութիւնը, որ այդ մտերմութեան մէջ կ'արտայայտէ իր ցաւը, ոչ որպէս դժգոհանք, այլ անկեղծ արտայայտութիւն:

Հետաքրքրականօրէն, Աբրամի ուզածը հարստութիւն չէր, որպէս ազահի, կամ երկար կեանք, որպէս մահէն վախցող: Այլ՝ ժառանգորդ մը կը խնդրէ, որպէսզի ժառանգէ, ոչ հարստութիւնը, այլ իմաստութիւն եւ հաւաքը: Ահա Աստուծոյ խոստումը, որ Աբրամ պիտի ունենայ զաւակ մը, եւ այդ զաւակը օրինական ամուսնութենէ: Ահա այս զաւակը պիտի դառնար նախապարկերացումը գալչք ճշմարիտ զաւակին՝ Զրիստոսին, որուն մասին կը գրէ Մատթէոս Աւետարանիչ, «Յիսուս Զրիստոսի ազգաբանութիւնը, որ Դաւիթի որդին է եւ Աբրահամի որդին» (Մատթ 1:1):

«**Ղուրս հանեց զանիկա**»: Որպէսզի կարենանք հասկնալ Աստուծոյ կամքն ու խորհուրդները պէք է ղուրս գալ իր էութենէն, մարմնական կաշկանդումէ: Միւս կողմէ, ղուրս դնել ամեն փեսակի թերութիւն եւ ազդեցութիւն (հմմտ Իմաստ 1:4):

Աստուծոյ փութած խօսքին ու խոստումին համար ամբողջական վստահութիւն ունենալ, խոստում մը որ վեր է մարդկային բոլոր փեսակի փրամաբանութենէն:

Ջոհերու իմաստը երինջ, այժ եւ խոյ, իսկ միւս երկու փեսակները՝ փայտակ եւ աղանիի ձագ: Իւրաքանչիւրը 3 փարեկան: Առաջին երեք փեսակի կենդանիները, աշխարհիկ մարդը կը ներկայացնեն, իսկ միւս երկուքը՝ հոգեւոր: Երեք փարեկանը կը ներկայացնէ երեք փարքեր ժամանակահատուածները՝ Ադամէն-Նոյ, Նոյէն-Աբրահամ, Աբրահամէն-Դաւիթ: Երեք նաեւ կը խորհրդանշէ՝ երրորդութեանը:

Այդ գոհերուն ընդունման պարագային Աստուծոյ իբրեւ նշան կրակով կ'անցնին անոնց մէջէն: Կրակը խորհրդանիշ լուսաւորութեան եւ միեւնոյն ժամանակ այրող յարկութիւն ունեցող: Այս երեւոյթը նաեւ կը պարկերացնէ գալիք վերջին դատաստանի վիճակը:

Այս հարուածին մէջ նաեւ Տէրը կը ներկայացնէ Աբրամին անոր սերունդին ունենալիք դժուարութիւնները ու պանդխտութեան վիճակը, որ պիտի պատմուի Ելից գրքին մէջ, Եգիպտոսի սարկութիւնը, ու հոն 400 փարի պիտի չարչարուին:

Գեպէ մինչեւ գեպ: Այս բացարթութեան մէջ կը հետեւեալ խորհուրդը՝ առաքինութիւն, միւս կողմէ նաեւ փորձութիւններ: